02.02.2012թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՋԻԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011Թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին Ջիլ համայնքի 45/քառասունհինգ/ բնակիչ, համայնքի ավագանու անդամներ/4անդամ/,մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարական բաժնի վարիչ Է.Ստեփանյանը:

Նիստը վարում էր նիստի նախագահ Միքայել Ղարիբյանը, արձանագրում էր նիստի քարտուղար Ռոզա Ավետյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Ջիլ գյուղական համայնքի ղեկավարի 2011թ. կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն /զեկուցեց Մ.Ղարիբյանը/

Լսեցին. Ջիլ համայնքի ղեկավար Միքայել Ղարիբյանը զեկուցեց 2011թ կատարած աշխատանքների վերաբերյալ

Արտահայտվեցին. Ջիլ համայնքի բնակիչներ,ավագանու անդամներ

ՈՐՈՇԵՑԻՆ

Ջիլ համայնքի ղեկավար Միքայել Ղարիբյանի 2011թ.կատարած աշխատանքները համարել դրական:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ.ՂԱՐԻԲՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ.ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջիլ համայնքի ղեկավարի 2011թվականի 12 ամիսների ընթացքում իրականացրած պարտադիր և կամավոր լիազորությունները և կատարած աշխատանքները՝ըստ գործունեության բնագավառների:

1.Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

ա/2011թ. հունվար ամսին կազմակերպվել և իրականացվել է համայնքի բնակիչների հաշվառում,ըստ որի տվյալների համայնքում բնակվում են 685 մարդ մշտական հաշվառմամբ և 90 մարդ ժամանակավոր հաշվառմամբ բնակիչներ:

բ/Կատարվել է համայնքի բնակիչների ընդունելություն թվով 87 քաղաքացիների,որոնց առաջարկությունները,դիմումները և բողոքները օրենքով սահմանված կարգով քննության է առնվել և ձեռնարկվել է համապատասխան միջոցներ խնդիրների լուծման ուղղությամբ:

գ/Կայացվել է համայնքի ղեկավարի 17 որոշում և 6 կարգադրություն:Բոլոր որոշումները և կարգադրությունները հիմնականում ուղղված է եղել տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի իրականացման խթանմանը և նպաստել ու օժանդակել է համայնքում նրանց գործունեության առավել արդյունավետ իրականացմանը:

2.Ֆինանսների բնագավառում իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

ա/Կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի 2011թվականի բյուջեի նախագիծը 13120,4 հազ.դր. եկամտային մասով,որից սեփական եկամուտները կազմել է 4931,2հազ.դրամ,որտեղ ներառվել է նախկին տարիների 1700,0հազ.դրամ անհուսալի ապառքմեր:Այդ պատճառով առաջարկվել է բյուջեի փոփոխություն 1700,0հազ.դրամով պակասեցնել սեփական եկամուտները՝բյուջեի կատարումը ապահովելու նպատակով:Բյուջեի փոփոխված նախագիծը ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը,ըստ որի սեփական եկամուտները կազմել են 3231,2հազ. դրամ:Սեփական եկամուտների հավաքագրումը ըստ տարբեր հարկատեսակների ունի հետևյալ պատկերը.

h/h	Հարկատեսակները	Պլան /հազ.դր./	Փաստացի /հազ.դր./	Կատարողականը /%/
1.	Հողի հարկ	1500,0	1381,3	92,1

2.	Գույքահարկ	338,4	313,9	92,8
3.	Տեղական տուրք	50,0	90,0	180,0
4.	Հողի վարձավճար	1292,8	1338,0	103,5
5.	Այլ հարկային եկամուտ	50,0	29,0	58,0
6.	Ընդամենը	3231,2	3152,2	97,5

Ջիլ համայնքի 2011թ.բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման թվային վերլուծությունից հետևում է,որ նախատեսված 3231,2հազ.դրամ եկամուտը փաստացի կատարվել է 3152,2հազ.դրամով կամ կատարվել է 97,5%-ով,որը ցածր է մարզի միջին ցուցանիշի 98,3%-ից 0,8%-ով:
բ/սահմանվել է տեղական տուրքերի դրույքաչափերը,հիմնականում ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվությունների համար սահմանվել է 6000-ական դրամ,որոնց որոշման նախագծերը ներկայացվել է Ջիլ համայնքի ավագանու հաստատմանը:
գ/համայնքի ֆինանսական միջոցները ամբողջովին տնօրինվել է և ապահովվել է դրանց նպատակային օգտագործումը:Բյուջետային ծախսերի վերաբերյալ տվյալները ներկայացվում է ըստ տնտեսագիտական դասակարգման.

h/h	Բյուջետային ծախսերը	Պլան /հազ.դրամ/	Փաստացի /հազ.դրամ/	Կատարողականը %
1.	Աշխատավարձ	7648,4	7648,0	100
2.	Սոցապահովության վճար	1612,4	1369,7	84,9
3.	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	1360,0	1333,1	98,0
4.	Սոցիալական նպաստներ	500,0	500,0	100
5.	Ֆոնդային բյուջե	932,0	524,1	56,2
	Ընդամենը	12052,8	11374,9	94,4

Բյուջետային ծախսերի ցուցանիշներից երևում է,որ պլանային 12052,8 հազ.դրամ ծախսերը կատարվել է 11374,9 հազ.դրամ կամ 94,4%-ով, այսինքն առկա միջոցները ծախսվել են նպատակային և խնայողաբար:
3.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

ա/համայնքի գլխավոր հատակագծի կազմման աշխատանքներ իրականացնելու նպատակով պայմանագիր է կնքվել «Հայնախագիծ»ԲԲԸ-ի հետ,որի նպատակով համայնքի բյուջեից փոխանցվել է 1024,1հազ.դրամ և պայմանագրով նախատեսված նախագծային աշխատանքները կավարտվի 2012թ.մարտի 30-ին:
բ/համայնքը ունի խմելու ջրագծի 5կմ արտաքին և 8կմ ներքին ցանցեր:Խողովակաշարը հնացած է 35-40 տարվա վաղեմությամբ և ենթակա է վերակառուցման:2011թ. մարտի 12-ին կնքվել է համաձայնագիր «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ»կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության հետ,որի համաձայն՝համատեղ ներդրումներով կատարվում է Ջիլ համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի 2160գնմ խողովակաշարի վերանորոգման և վերականգնման աշխատանքներ:Աշխատանքները ավարտվել են 2011թ.հունիսի 16-ին,որի արդյունքում 2 թաղամասի ջրագծի մետաղյա հին և մաշված խողովակաշարերը փոխարինվել են 75,65 և 30 տրամաչափի պոլիէթիլենային խողովակներով:
4.Կրթության բնագավառում կազմակերպվել է համայնքային ենթակայության մանկապարտեզի բնական գործունեությունը: Մանկապարտեզը գործում է շուրջօրյա,աշխատողների աշխատավարձերը և սոցվճարները վճարվում է համայնքի բյուջեից և 2011թվականի ընթացքում աշխատավարձի և սոցվճարի գծով պարտքեր չկան,վճարվել են ամբողջովին:Մանկապարտեզի սննդի հարցը լուծվում է «Համաշխարհային պարենի ծրագրի սնունդ աշխատանքի դիմաց»ծրագրով:
5.Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում 2011թ.համայնքի բյուջեից հատկացվել է 500,0հազ.դր. համայնքի 10 անապահով,կարիքավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքներին 50000-ական դրամ դրամական օգնություն տրամադրելու նպատակով:
6.Գյուղատնտեսության բնագավառում իրականացվել է հետևյալ աշխատանքները.
ա/կատարվել է համայնքի ոռոգման ցանցի շուրջ 1,5կմ երկարությամբ առուների մաքրման և վերանորոգման աշխատանքներ:
բ/կազմակերպվել է համայնքի անասնաբուժական ծառայության աշխատանքները,իրականացվել է հակահամաճարակային միջոցառումներ,կատարվել են կանխարգելիչ պատվաստումներ,կենդանիների բրուցելյոզ և այլ վարակիչ հիվանդությունների կանխման միջոցառումներ են իրականացվել:

գ/աջակցվել է համայնքի բնակիչների կողմից իրականացվող գյուղատնտեսական աշխատանքներին:2011թ.մարտ ամսին Ջիլ համայնք ներկրվել է շուրջ 13400 կգ բարձրորակ գարու սերմացու և ամբողջովին բաշխվել է համայնքի հողօգտագործողներին՝ գարնանացան գարու մշակության խթանման և ցանքատարածությունների ավելացման նպատակով:
7.Պաշտպանության բնագավառում աջակցվել է գարնանային և աշնանային զորակոչերին,զորահավաքներին և ուսումնավարժական հավաքներին:

Աջակցվում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը:Ընթացքի մեջ է համայնքի քաղպաշտպանության պլանի մշակման աշխատանքները,որին վերջնաժամկետ է սահմանված 2012թ.մարտի 30-ը:Աջակցվում է համայնքի բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Ավարտելով խոսքս՝ասեմ,որ անցած 2011թվականին կատարված աշխատանքները,ծրագրերը և միջոցառումները հնարավոր է եղել իրականացնել իմ և իմ աշխատակազմի,համայնքի ավագանու անմիջական մասնակցությամբ և հետևողական աշխատանքի շնորհիվ և վստահեցնում եմ,որ 2012թվականին մեր աշխատանքները և գործադրած ջանքերը ուղղված են լինելու համայնքի զարգացմանը և համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական մակարդակի բարձրացմանը: